

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, ՄՍ

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ԷԶՄԻԱԾՆԱԿԱՆ ԿՈՆՂԱԿՆԵՐԻ ՍԱՏԵՆԱՇԱՐԸ

ա. Դիան Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի. Մասն Ա. Էջմիածնի կաթողիկոսների կոնդակներ (1652-1705 թթ.), Աշխատասիրեց Խաժակ Տէր-Գրիգորեան, Անթիլիաս, 2003, 199 էջ.

բ. Դիան Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի. Մասն/ Բ. Էջմիածնի կաթողիկոսներու կոնդակներ (1705-1800), Աշխատասիրեց Վարուժան արքեպիսկոպոս [Հերկելեան, Անթիլիաս], 2015, 12 չի., 267 էջ¹:

Այս հատորների մէջ հրատարակուած կոնդակները ոչ թէ միայն Նոր Զուղայի, այլ առաջին հերթին ընդհանրապէս մեր երկրի, ժողովրդի եւ եկեղեցու պատմութեան շատ արժէքաւոր սկզբնաղբիւրներ են: Տարիներ առաջ արծարծուած նոյնաբնոյթ մի խնդրի առիթով գրել ենք հետեւեալը. «Ժէ. դ. կէսից մնչեւ ժթ. դ. վերջի շրջանի համար դեռեւս մնացել է մի կարեւոր անելիք՝ մեր եկեղեցու նուիրապետական աթոռների դիւանների փաստաթղթերի գիտական, կանոնաւոր եւ ներկայիս պահանջները բաւարարող հաշուառում-հրատարակումը... Էջմիածնի փաստաթղթերի կողքին պէտք է անպայման նկատի ունենալ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի, Պոլսի եւ Երուսաղէմի պատրիարքարանների, Նոր-Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, թեմական այլ կենտրոնների, Փարիզի Նուպարեան մատենադարանի (ծագումով՝ հիմնականում պոլսական) հարուստ դիւանները»²: Եւ ահա՝ այս մատենաշարով գիտական շրջանառութեան

¹ Երկու գիրքն էլ, Անթիլիասում տպուած լինելով հանդերձ, ունեն «Հրատարակութիւն Սպահանի հայոց թեմի» վերնախորագիրը:

² Տե՛ս Գեորգ Տէր-Վարդանեան, Հայ եկեղեցու պատմութեան աղբիւրների հրատարակման եւ գիտական շարադրանքի ստեղծման խնդիրներ (Նոր հրատարակութիւնների տեսութիւն եւ նկատումներ), Հասկ հայագիտական տարեգիրք, Նոր շրջան, Թ. տարի.

մէջ է դրուել հէնց Նոր Զուգայի դիւանի շատ արժէքաւոր փաստաթղթերի՝ ուշ միջնադարի մեր պատմութեան կարեւոր սկզբնաղբիւրների մի էական քանակ: Սրանով իսկ մատենաշարն անպայման օգտակար եւ գնահատելի է, ուստի եւ առաջին հերթին ուրախառիթ է ու ողջունելի, ուստի եւ նախնական հպանցիկ ծանօթութիւնն իսկ մեզ մտաբերել տուեց յիշատակարանային մաղթանքը՝ թող Տէր Աստուած «վարձս բարեաց պարգեւեսցէ աշխատաւորաց գրեանցս»:

Մեզ համար իսկապէս մեծ հաճոյք է այս գրքերը նախ գիտական հանրութեանը ներկայացնելը, ապա՝ քանի որ տարբեր ժամանակներում նոյնաբնոյթ մեծ կամ փոքր աշխատանքներ անելու առիթ ենք ունեցել, ուստի կարեւոր ենք համարում նաեւ այս գրքերին վերաբերող՝ մեր փորձի վրայ հիմնուած եւ մեր համոզմամբ օգտակար առաջարկներ հրապարակելը, որոնցով եւ, կարծում ենք՝ կարող են կանխուել շարքի յաջորդ հատորներում լինելիք առանձին թերութիւններ, այսինքն՝ ապագայ հատորներում վաւերագրերը կարող են մշակուել բնագրագիտական աւելի տրամաբանական սկզբունքներով: Անկասկած, այս մտօք շարադրանք պէտք է հրապարակէինք դեռեւս 2003 թ.՝ շարքի առաջին գրքի լոյսընծայումից անմիջապէս յետոյ, բայց ամէնօրեայ պարտաւորութիւններ եւ տարատեսակ զբաղմունքներ ականաջ յետաձգել տուեցին. ժամանակ անց առիթով հպանցիկ հրատարակեցինք մի ծանօթութիւն³, որ երեւի չնկատուեց, ի վերջոյ տպագրուեց երկրորդ գիրքը⁴, որն արդէն թելադրեց ներկայ շարադրանքի անհրաժեշտութիւնը:

Առաջին գիրքն է՝ «Զօն Նոր Զուգայում հայերի հաստատման 400ամեակին» (էջ 5)⁵. սկսւում է «21 հոկտ. 2002» թուագրուած եւ «Երկու խօսք» վերնագրուած մուտքային երկէջ շարադրանքով (էջ 7-8), որ ստորագրել է՝ «Շահան Ժ. վրդ. Սարգիսեան՝ Առաջնորդական տեղապահ Սպահանի հայոց թեմի» եւ որ նման դէպքերի պատշաճ ողջնահանուր խօսք է. այստեղից տեղեկանում ենք, որ յայտնի բանասէր Լեւոն Մինասեանի ձեռքով ժամանակ առաջ Նոր Զուգայի առաջնորդարանի դիւանի

1997-2001, Անթիլիաս - Լիբանան, 2001, էջ 424-5 (ամբողջը՝ էջ 423-51):

³ Հմմտ. Գէորգ Տէր-Վարդանեան, «Յարութիւն Բիրտեան» հաւաքածոյի կոնդակները (Նկարագրութիւններ եւ բնագրեր), «Էջմիածին» ամսագիր, 2012/Ե., էջ 71, ծ. 5:

⁴ Տպագրուելու լուրն առել ենք 2016 թ. մայիսի վերջին, բայց գիրքը որոշ չափով ուշ՝ 2017 թ. յունուարի կէսին շտրիակալութեամբ ստացանք Անի Թարխանեանից:

⁵ Թէկուզ այս գրքի «Առաջարկ»-ն սկսում է շահաբաստան «մեծ սուրբուն» առաւել քան շիտակ ակնարկող խօսքով՝ «Հայ ժողովուրդը ԺԷ. դարում ապրեց իր պատմութեան ամենաողորմական եւ ամենաճակատագրական ժամանակաշրջաններից մէկը» (էջ 9), բայց այս «ծօն»-ի հետ միասին շատ տարօրինակ է, որ Ի. դարի սկզբին մեր ժողովրդի կրած անլուր եղեռնի հետ զուգորդուող՝ մարդակոյ այդ բռնագաղթի 400ամեակը հէնց իրանահայոց որոշ շրջանակներում ժամանակին համարուեց նշելի (իմա՛ տօնելի) իրադարձութիւն:

կարգաւորումից⁶ յետոյ «Յաճախ է մտածուել նիւթերի աստիճանական եւ ժամանակագրական հրատարակութեան մասին», ըստ այդմ եւ «Սպահանի հայոց թեմի ազգային իշխանութեան» որոշմամբ կոնդակներն այս հատորեակը պատրաստել է Խաթակ Տէր-Գրիգորեանը⁷, ապա խմբագրել է Շահան ծ. վրդ. Սարգիսեանը՝ «Հետեւեցինք հեղինակի ցուցմունքներին եւ տպագրութեան արդի կարելիութիւններին: Վրիպումները սրբագրեցինք, կոնդակները կրկին համեմատեցինք, փորձեցինք միաձեւութիւնը պահել եւ ամբողջացնել ցանկերը» (էջ 8):

Գիրքը պատրաստողի «Խ. Տ.-Գ.» ստորագրած «Առաջաբան»-ի (էջ 9-36) զգալի մասը յայտնի աղբիւրների եւ հետազոտութիւնների հիման վրայ հիւստեւած՝ Ժ. Դ. սկզբի մեր պատմութեան համառօտ ուրուագիծ է⁸: Գրքի բուն խնդրին՝ կոնդակների հրատարակութեան սկզբունքներին եւ հանգամանքներին վերաբերող մասը 33-36րդ էջերում է (աւարտում է շնորհակալիքով). ըստ այսմ՝

- Սպահանի թեմի պատկան մարմինները որոշել են վանքի դիւանի վաւերագրերի հրատարակումը («վերծանել, թարգմանել, ծանօթագրել եւ հրատարակութեան պատրաստել») սկսել «էջմիածնի կոնդակներ» թղթածրարից, որ է՝ «Պահարան թիւ 5, գլրոց 3, համար 27/դ», ուր կայ 1652-1973 թթ. վերաբերող 289 փաստաթուղթ, որոնցից 241ը ձեռագիր են (վերջինը՝ 1926 թ.), 48ը՝ տպագիր⁹. մեր խնդրոյ առարկայ գրքում հրատարակուել է 1652-1705 թթ., այսինքն՝ Ժ. Դարին վերաբերող 24 կոնդակ: Ըստ սկզբնապէս ստանձնած պարտաւորութեան՝ Խ. Տէր-Գրի-

⁶ Տե՛ս «Հրատարակութիւն Իրանա-Հնդկաստանի հայոց թեմական խորհրդի» վերտառութեամբ հետեւեալները՝ Դիւան Ն. Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի 1600-1900. Ուղեցոյց գրքոյկ, Կազմեց՝ Լ. Գ. Մինասեան, Նոր Ջուղա, 1976, 55 էջ. աւելի կատարեալ-ամբողջական տարբերակը՝ Դիւան Ս. Ամենափրկիչ վանքի 1600-1960. Արխիւի ուղեցոյց գրքոյկ, Կազմեց՝ Լ. Գ. Մինասեան, Նոր Ջուղա, տպ. Ս. Ամենափրկիչ վանքի, 1983, 134 էջ (այսուհետեւ՝ Դիւան ՆՋ, 1983):

⁷ Վախճանումը է 2001 թ. սեպտեմբերի 21ին. տե՛ս Խաթակ Տէր-Գրիգորեան. կենսամատենագիտութիւն, Երեւան, «Գիթք», 2003, էջ 6:

⁸ Այստեղ որոշ անսովոր արտայայտչաձեւեր կան. օրինակ՝ Առաքել Դարիժեցոյց արուած մի քաղուածք տարօրինակ տեսք ունի՝ «Այլեւ երեք մասն ի ժողովրդոց դաշտ[sic] կոչեցեալ տեղին, որ է ի գաւառին գողթան[sic] մերձ յԱգուլիս» (էջ 9). յիշել է՝ Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյց, Վաղարշապատ, 1896, էջ 16: Գրքի 159րդ էջում տեսնում ենք, որ օգտագործել է նոյն բնագրի նաեւ վերջին՝ համեմատական հրատարակութիւնը՝ Առաքել Դարիժեցի, Գիթք պատմութեանց, Աշխատասիրութեամբ Լ. Ա. Խանկաբեկեանի, Երեւան, 1990, որի 63րդ էջից կարող էր առանց անհաճոյ [sic]-երի քաղել նոյնի այս տեսքը. «Այլեւ երեք մասն ի ժողովրդոց՝ Դաշտ կոչեցեալ տեղին՝ որ է ի գաւառին Գողթան՝ մերձ յԱգուլիս». կարող էր նաեւ առանց որեւէ ծանօթութեան անունները գրել զլիսատաւերով՝ Դաշտ, Գողթան: Կամ՝ էջ 16. նոյն Դարիժեցոյց 1896ի նոյն տպագրի 15րդ էջից առել է վրիպակով՝ «գեղծեալ[sic] ի ծառայութենէն Օսմանցոց». մինչդեռ 1990ի հրատ-ն նոյն 63րդ էջից կարող էր առնել ուրիշ՝ «գերծեալ» ընթերցումով տարբերակը:

⁹ Տե՛ս Դիւան ՆՋ, 1983, էջ 57-74:

գործանքը պատրաստել է նաեւ կոնդակների «աշխարհաբար թարգմանութիւնը», յետոյ իրաւացիօրէն համոզուել է, որ այս բնագրերը հասկանալու համար «գրաբարի իմացութիւնն անհրաժեշտ չէ», ուստի եւ գիրքը տպագրուել է առանց բնագրերի աշխարհաբար տարբերակների:

Առաջաբանի վերջում «Խմբ.» ստորագրութեամբ Շահան եպս. Սարգիսեանի դրած յաւելումը տեղեկացնում է, որ «Այս աշխատասիրութեան տպագրութեան ընթացքին» ներկայ ժողովածուի հինգ կոնդակ արդէն տպագրուել են Վազգէն Ղուկասեանի «Նոր Զուղայի հայոց թեմի առաջացումը տաանեթերորդ դարում» գրքում¹⁰: Ապա համառօտ այս ծանուցումն ավարտում է՝ ասելով. «Երկուքի ներկայացման մէջ տարբերութիւններ են նկատուում» (էջ 36), բայց չի ասում, թէ ի՞նչ տարբերութիւնների մասին է ակնարկում, ուստի միայն նոյն «երկուք» իրար կողք դնելով ենք տեսնում, որ էապէս տարբեր են փաստաթղթերի ներկայացման եղանակները, որոնց մասին խօսել անպայման արժէք: Ուստի Շ. եպս. Սարգիսեանի չսասածը հետագայ շարադրանքի մէջ մենք պէտք է ասենք, այստեղ միայն նկատելով, որ Նոր Զուղայի «Դիւան»-ի ներկայացման եղանակը տարբեր է ոչ թէ միայն Վ. Ղուկասեանի կիրառածից, այլ ընդհանրապէս ընդունուած սկզբունքներից:

Առաջին տարօրինակ տարբերութիւնը, որ շարունակուած է նաեւ Դիւանի երկրորդ գրքում, փաստաթղթերի կարգային-հերթական համարներից յետոյ դիւանական (արխիւային) համարները (թիւ) անտեսելը՝ չնչին է. բոլորովին բաւարար չէ միայն առաջին գրքի առաջաբանում ասած լինելը, թէ հրատարակուող փաստաթղթերը պահպանւում են Նոր Զուղայի վանքի դիւանի «Պահարան թիւ 5, գրքոց 3, համար 27/դ» «թղթածրար»ում, այլ ամէն առանձին վաւերագրի դէպքում պէտք էր կարգային 1-24 համարներից յետոյ գրել, ասենք՝ «Պահարան թիւ 5, գրքոց 3, համար 27/դ, փաստաթուղթ 1», «փաստաթուղթ 2»... «24». ճիշտ է՝ գրքերում առկայ կարգային եւ վաւերագրերի դիւանական համարները նոյնական են, սակայն եթէ աւելորդ կամ անտեղի է համարուել ամէն անգամ առաջին գրքի նոյն՝ 1-24 եւ երկրորդի 25-90 համարները կրկնելը, ապա

¹⁰ Տե՛ս The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century, By Vazken S. Ghougassian, Scholars Press, Atlanta, Georgia, 1998. այստեղ կայ մեր խնդրոյ աւարկայ մատենաշարում ամկայ վեց միաւոր. Ա.1 (էջ 41-3)՝ Ղուկասեանի գրքի փաստաթուղթ 10, էջ 230-4, Ա.5 (էջ 51-2)՝ Ղուկ., փաստ. 11, էջ 235-8, Ա.6 (էջ 53-4)՝ Ղուկ., փաստ. 12, էջ 239-42, Ա.12 (էջ 68-73)՝ Ղուկ., փաստ. 14, էջ 247-53, Ա.14 (էջ 77-80)՝ Ղուկ., փաստ. 15, էջ 254-8 եւ Բ.26 (էջ 4)՝ Ղուկ., փաստ. 20, էջ 280-83: Ղուկասեանը տպագրել է նախ անգլերէն թարգմանութիւնները, ապա՝ հայերէն բնագրերը. տպագրել է նաեւ Ա.1, Ա.5 եւ Բ.26 փաստաթղթերի սեւ-սպիտակ լուսանկարները:

պէտք էր երկու գրքի մէջ էլ ասել, որ կարգային այդ համարները համապատասխանում են դիւանականներին¹¹:

Սկզբունքների մնացեալ տարբերութիւններին կանգնադառնանք մի փոքր ուշ, իսկ այժմ ներկայացնենք գրքերի պարունակութիւնն ու կառուցուածքը.

Առաջին գրքի՝ «Երկու խօսք»-ին եւ «Առաջաբան»-ին յաջորդող բաժիններն են. «3. Բնագրեր»՝ 1-24 միաւոր, էջ 39-114, «4. Ծանօթագրութիւններ»՝ էջ 119-151, «5. Ցանկեր», որոնց մէջ՝ «ա. Օտար եւ դժուարընկալելի բառեր»՝ էջ 155-158, «բ. Օգտագործուած աղբիւրներ եւ գրականութիւն»՝ էջ 159-161¹², «գ. Ցանկ յատուկ անունների» (անձնանունները եւ տեղանունները միասնական այբբենական կարգով)՝ էջ 189-198: Իսկ չհամարակալուած 163-187 էջերում տպագրուած կոնդակների՝ կրկին չհամարակալուած սեւ-սպիտակ 25 նկարներն են (1ինը եւ 21րդը տպուած են նաեւ՝ էջ 37 եւ էջ 116, 14րդի մի հատուածը կայ նաեւ՝ էջ 115). այս նկարների գոյութիւնը նաեւ արտայայտուած չէ «Բովանդակութիւն» ցանկի մէջ (էջ 199):

Երկրորդ գիրքը նոյնպէս սկսւում է «Երկու խօսք»ով, որ ստորագրել է «Իսֆահանի հայոց թեմի առաջնորդ Բաբգէն Երս. Չարեան»ը (էջ 7-8 չհ.) եւ ընդհանուր գծերով արժեւորել հատորի պարունակած փաստաթղթերը, ապա՝ գրքի պատրաստութեան համար պատշաճ ձեւով գնահատել է թէ՛ Վարուժան արքեպս. Հերկելեանի եւ թէ՛ նրան օժանդակող մարդկանց, «յատկապէս տիկին Սոնիկ Բաղումեանի» վաստակը, վերջում շնորհակալութիւն է յայտնել գրքի տպագրութեան մեկենասներ Վարդան եւ Անահիտ Վարդանեաններին: Հատորի աշխատասիրող Վարուժան արքեպիսկոպոսի «Այս հրատարակութեան առիթով» խորագրուած առաջաբանը եւս հակիրճ է (էջ 9-10 չհ.). թուարկել է նախ առաջին գրքում տպագրուած 24 կոնդակների հեղինակներին եւ նրանց ստորագրած կոնդակների քանակները, ապա՝ նոյն ձեւով պատկերել է իր պատրաստած հատորի 67 (չ^ր 25-90)¹³ միաւորը, յետոյ՝ շատ համառօտ խօսքով գնա-

¹¹ Կրկնենք՝ երկրորդ գրքում ընդհանրապէս «Պահարան թիւ 5, գրքոց 3, համար 27/դ» նշում գոյութիւն չունի:

¹² Այստեղ՝ էջ 159 կայ. «Զաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, Պատ. խմբագիր Ս. Վ. Տէր Աւետիսեան, Երեւան, 1938». առիթ է ասելու, որ թէ՛ այդ աղբիւրը եւ թէ՛ Արքաիւմ Երեւանցու Պատմութիւնը հրատարակութեան է պատրաստել Թադէոս Աղալբէկեանը. տե՛ս Մ. Թ. Աղալբէկեան, Նիւթեր Զ. Ագուլեցու «Օրագրութիւն» եւ Ա. Երեւանցու «Պատմութիւն պատերազմացն» գրքերի հրատարակման պատմութեան վերաբերեալ, ՊԲՀ, 1974/1, էջ 224-238 (իմմո. Արքաիւմ Երեւանցի, Պատմութիւն պատերազմացն. 1721-1731, Պատ. խմբ. պրոֆ. Ս. Վ. Տէր-Աւետիսեան, ԽՍՀՄ Գիտութիւնների ակադեմիա, Հայկական ֆիլիալ, Երեւան, Արմֆանի հրատ., 1938, 108 էջ):

¹³ Կայ նաեւ «63(p)» ենթահամարով մի նամակ՝ էջ 89-91:

Հատել է հրապարակուած փաստաթղթերի պատմական արժէքն ու արժանիքները, ի վերջոյ՝ իր աշխատանքում գործադրուած սկզբունքները (երկու գրքում կիրառուած եղանակները ստորեւ ներկայացնելու ենք միատեղ):

Գիրքը «Բովանդակութիւն» անունով պարունակութեան ցանկ չունի. հետեւում է «Բնագրեր» բաժինը՝ էջ 1-168, ապա կարգով՝ «Օտար եւ դժուար հասկանալի բառեր» ցանկը՝ էջ 169-180, «Յատուկ անուններ»՝ էջ 181-190 (կրկին՝ անձնանուններ եւ տեղանուններ խառն), «Ծանօթագրութիւններ»՝ էջ 191-197, որոնք վերաբերում են զուտ կոնդակների հեղինակ կաթողիկոսներին, ապա՝ «Զուղայի առաջնորդներ 1700-1800»՝ էջ 198-200, ի վերջոյ, առանց որեւէ խորագրի, հրատարակուած բոլոր կոնդակների փոքրացուած գունաւոր լուսանկարները՝ էջ 201-267, որոնց տակ այստեղ արդէն մակագրութիւններ կան՝ «Թիւ 25 նամակ»... «Թիւ 90 կոնդակ»¹⁴:

Այսպիսով, ուրեմն, առաջին գրքում տպագրուած են Ժէ. դարի (1652-1705 թթ.), երկրորդում՝ ԺԸ. դարի (1705-1800 թթ.) կոնդակները: Պէտք է ենթադրել եւ յուսալ, որ «Դիւան Նոր Զուղայի» շարքի յաջորդելիք պրակ-մասերով աստիճանաբար հրատարակուելու են վերոյիշեալ «Պահարան թիւ 5, գլոց 3, համար 27/դ» թղթապանակի պարունակած բոլոր 289 փաստաթղթերը, որոնք արդէն վերաբերում են ԺԹ. եւ Ի. դարերին:

Դիւանական սկզբնաղբիւրների ժողովածուներում հրապարակուող բոլոր փաստաթղթերի լուսանկարների տպագրումը մեր իրականութեան մէջ, որքան գիտենք, առաջին անգամ կիրառուած է այս երկհատորեակում: Եւ սա լիովին ողջունելի ձեռնարկում է. թէկուզ կոնդակներն իրենց համար սովորական մեծ չափերի են¹⁵, եւ այդ չափսերի փաստաթղթերի փոքրացուած ու գրքի՝ լաւագոյն դէպքում 19,5x11,5 սմ չափսի գրադատի մէջ տեղաւորած լուսանկարները դիւրութեամբ եւ կատարեալ ընթեռնելի լինել չեն կարող, բայց սրանց մի մասը օժանդակ զանազան խոշորացնող միջոցների կիրառումով կարող են նպաստել առաջացող կասկածելի ընթերցումները ստուգելուն (բնականաբար, ներկայ շարադրանքն անելիս այդ հնարաւորութիւնն օգտագործել ենք):

Այժմ անդրադառնանք բնագրերի հրատարակութեան սկզբունքներին.

¹⁴ Այստեղ «63(p)» ենթահամարով նամակի լուսանկարը չկայ. տե՛ս 240-241 էջերի միջեւ:

¹⁵ Ասենք՝ Ա. գրքի Հ^ս 1 կոնդակը՝ 48x31 սմ, Հ^ս 2՝ 42x26, Հ^ս 3՝ 26x15, Հ^ս 4՝ 39x22, Հ^ս 5՝ 40x20,5, Հ^ս 6՝ 40,5x30, Հ^ս 9՝ 41x23, Հ^ս 10՝ 32x22, Հ^ս 11՝ 54,5x34, Հ^ս 12՝ 70x45 եւ այլն:

* * *

Խ. Տէր-Գրիգորեանը հետեւել է «հայ դիպլոմատիկայում ընդունուած սկզբունքներին» (տե՛ս գրքի էջ 34-35), որոնցից այստեղ թուարկում ենք մեր համոզմամբ առարկելի կէտերը, կարգային ամէն թուի կողքը դնելով գրքի Ա. համարը.

Ա.1. «յապաւումները, կապերըն ու գաղափարագրերը» բացել եւ «բառերի կատարեալ ձեւերը» վերականգնել է՝ բնագրում բացակայող «ամէն... տառ թէ բառ» դնելով «ուղղանկիւն փակագծերում []» (էջ 34): Այսինքն՝ «Պ[ա]ր[ո]ն», «վ[ա]րդ[ա]պ[ե]տէ», «ո[ր]պ[է]ս Ա[ստուծո]յ» եւ այլն:

Ա.2. Վրիպակի տպաւորութիւն թողնող քերականական-ուղղագրական զարտուղութիւններից առաջ դրել է նոյն կերպ փակագծուած «լատիներէն [sic] բառը»¹⁶:

Ա.3. Անընթեռնելի վիճակից վերծանուած բառերից առաջ դրել է «հարցական նշան [°]»:

Ա.4. Յստակ ընթերցողը բայց անորոշ իմաստ ունեցող բառերի կողքը դրուել է «[sic°] նշանը»:

Ա.5. «որտեղ ցանկացել ենք հրաւիրել ընթերցողի ուշադրութիւնը, դրել ենք [NB] նշանը»¹⁷:

Դիւանի երկրորդ գրքում առաջինի սկզբունքների մի մասը պահպանուել է, բայց նաեւ նորութիւններ կան (համառօտ թուարկումը՝ էջ 10 չհ.), սրանց կարգային համարները նշում ենք Բ. ցուցիչով՝

Բ.1. Առաջին գրքի նմանութեամբ՝ «Օտար կամ դժուար հասկնալի բառերը ըմբռնելի դարձնելու մտահոգութեամբ, հատորին կցեցինք յատուկ ցանկ մը... Թէեւ պէտք է խոստովանիլ, որ տասնեակ մը բառեր մնացին անստույգ».

Բ.2. «ուղղագրական սխալներ կամ այլ թերացումներ առհասարակ պահած ենք նոյնը, անոնց կողքը նշելով [բն], այսինքն՝ բնագրի հարագատութեամբ»¹⁸.

¹⁶ ԺԹ. դ. երոսպական եւ երոսպանմանուող գրականութեան մէջ գործածում էր այսպէս՝ «sic!»:

¹⁷ Հայերէն թուատառերը, անկախ բնագրում առկայ գրելաձեւից, գրել է գլխագիր, ասեմք՝ բնագրում պատիւի նշանի ներքոյ գրուած «ոճա»ն դարձրել է «ՌՃԱ». ճիշտ է արել, բայց արժէր ըստ ասանդոյթի վերջին գրի կողքը նաեւ կէտ դնել՝ «ՌՃԱ.», որովհետեւ ո՛չ միայն գլխատառ լինելով, այլեւ այս կէտն ունենալով է երեւում գրի կամ գրերի խմբի թուատառ լինելը:

¹⁸ Ճիշտ վարմունք է հետեւեալը. «Նոյն կամ տարբեր կոնդակներու մէջ [նոյն] բառեր գրուած են տարբեր ուղղագրութեամբ: Մենք կատելով բնագրի հարագատութեան, այդ տարբերութիւնները պահած ենք նոյնութեամբ. այսպէս. Սառֆազ, Սարֆազ...» (չի. էջ

Բ.3. «Կարգ մը ծանօթագրութիւններ նշած ենք ուղղակի բնագրին վրայ քառակուսի փակագիծերու մէջ, օրինակ Աւետարանէն մէջ բերուած խօսքին գլուխը, համարը»:

Բ.4. «...գլխաւոր ծանօթագրութիւններու պարագային, նախորդ հատորի նմանողութեամբ, յատկացուցած ենք յատուկ գլուխ մը՝ «Ծանօթագրութիւններ» խորագրով: Անշուշտ մեզի համար դժուար էր եւ կարելի չէր կոնգակ-նամակներէն բխած բոլոր հարցերը ծանօթագրել, որուն համար ընթերցողը ներողամիտ թող ըլլայ»¹⁹:

Այժմ քննարկենք թուարկուած կէտերից միայն մեզ համար խնդրականները՝ Ա. գրքի կէտերը յիշելով Ա.1... Ա.5, Բ. գրքինը՝ Բ.1... Բ.3 ձեւերով (օտար բառերի ցանկերի մասին՝ վերջում):

* * *

Ա.1. «Հայ դիպլոմատիկայում ընդունուած սկզբունքները» որեւէ դրսեւորման մէջ տեսած չլինելով առաջին կէտում գործադրուած հնարքը՝ դեռեւս 2012 թ. այն համարել ենք «Բնագրագիտական անհմտութեան կամ նրա տարրական կանոններին անտեղեակ լինելու դասական նմուշ» եւ շարունակել. «Այս գրքի խմբագիրը մեր բարեկամ Շահան Եպս. Սարգիսեանն է, սակայն պատիւի նշանով համառօտուած բառերն այստեղ վերծանուած են փակագծեալ. փորձենք կարդալ՝ «շն[ո]րհք առ[ա]ք[ե]լ[ա]կ[ա]ն, հանդերձ ա[ստուա]ծ[ա]յին բազմապ[ա]տիկ ա[ւր]հնութ[եամ]բն եւ նախախնամակ[ա]ն գթութ[եամ]բն, ի վ[ե]ր[ա]յ տիրապահ եւ ա[ստուա]ծախն[ա]մ, սկզբնահա[ստ]ա եւ սեպհականեալ առ հ[ա]ս[ա]ր[ա]կ կ բոլ[ո]ր տէրունի վիճակի Ս[ր]բ[ո]յ Աթոռոյս էջմիածնի, Ա[ստուծո]յ ա[ւր]հնեալ» (էջ 93) «Յ[իսուս]ի Ք[րիստոս]ի ծառայ Տէր Նահապետ Կ[ա]թ[ո]լիկոս Ամենայն Հայոց» (էջ 112): Բնագրի այսպիսի վերծանում կարգալը տաժանք է, որովհետեւ մարդ խճճուած է փակագծերի եւ տառերի միջեւ, ուստի պէտք էր վերադարձնել աւանդաբար ընդունուած ձեւով. «շնորհք առաքելական, հանդերձ աստուածային բազմապատիկ աւրհնութեամբն եւ նախախնամական գթութեամբն, ի վերայ տիրապահ եւ աստուածախնամ, սկզբնահաստատ եւ սեպհականեալ առ հասարակ

10):

¹⁹ Այս կէտի մասին ասելիք չունենք. վերը այս՝ Բ. գրքի բովանդակութիւնը ներկայացնելիս արդէն ասել ենք, որ այստեղ ծանօթագրութիւնները (էջ 191-200) համառօտ են եւ վերաբերում են միայն կոնգակների հեղինակ կաթողիկոսներին եւ Նոր Զուղայի 1700-1800 թթ. առաջնորդներին: Բնագիր հրատարակողը նոյն բնագրի առթած բոլոր հարցերը լուծելու պարտաւորութիւն չունի. այս դէպքում գոհանանք եւ աշխատասիրողին շնորհակալ լինենք մեր ստացածով, իսկ ծանօթագրել կարող են նաեւ ապագայում այս բնագրերն իրենց հետազօտութիւնների մէջ օգտագործողները:

բոլոր տէրունի վիճակի Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, Աստուծոյ աւրհնեալ» եւ «Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Նահապետ Կաթողիկոս Ամենայն Հայոց»²⁰:

Այժմ բացատրենք. դպրոցի առաջին դասարանում այբբենարանով սերտում ենք բառերն ընթերցել հեգելով՝ վանկատելով, այնուհետեւ տարբեր ընթերցարաններով սովորում ենք տեսնել եւ վարժ կարգալ ամբողջական բառապատկերները (նաեւ՝ կանոնով տողադարձուած), երբ բառապարկերի մէջ օտար կամ խորթ նշան է մտնում, այդ պատկերը խաթարում է, ընթերցման արագութիւնը վերանում է. մեր «Դիւան»ի դէպքում՝ մարդ ստիպուած է լինում կարգալ ոչ թէ վանկ առ վանկ, այլ՝ տառ առ տառ, յետոյ այդ տառերն իրար է կապում եւ բառ ստանում, բառերն էլ կապում եւ նախադասութիւն է ստանում... Ի վերջոյ կարգացածը հասկանալը դառնում է մտքի իսկական տաժանք-տանջանք:

Ոսկեդարից սկսելով՝ միջնադարեան մեր բոլոր սկզբնաղբիւրները հրատարակում ենք համառօտումներն ու յապաւումները բացելով եւ բառերը լրիւ գրելով, առանց ուղղանկիւն (միջակ), կոր կամ որեւ այլ տեսքի որեւէ փակագծի²¹, լաւագոյն դէպքում հիմք ձեռագրերի նկարագրութիւնների մէջ ընդհանուր գծերով բնութագրելով նրանց մէջ առկայ համառօտումները (պատիւի նշանով՝ անձայնաւոր, տերունական բառերը՝ «Ա՛յ»՝ Աստուծոյ, «Տ՛ն»՝ Տեառն եւ այլն), որոնք դասագրքային գրականութեան մէջ մեծ մասամբ բնութագրուած-ցանկուած են, իսկ վերծանումները կասկածելի-թէական տեղիները, բնականաբար, ծանօթագրւում են²²:

Բնագրերի վերծանութեան այս փակագծային եղանակը Նոր Զուղայի Դիւանի առկայ երկու գրքի մեծագոյն թերութիւնն է, ուստի եւ յաջորդելիք հատորներում փակագծային այս խճողանքից խուսափելը խիստ ցանկալի եւ անհրաժեշտ է:

²⁰ Տե՛ս Գեորգ Տէր-Վարդանեան, «Յարութիւն Քիրտեան» հաւաքածուի կոնդակները (Նկարագրութիւններ եւ բնագրեր), «Էջմիածին» ամսագիր, 2012/Ե., էջ 71, ծնթ. 5:

²¹ Բացառութիւն են, երեւի թէ, միայն վիմագիր արձանագրութիւնները, որոնց հրատարակութեան սկզբունքների համար տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պրակ Ա. Անի քաղաք, Կազմեց Յ. Օրբէլի, Երեւան, 1966, էջ Ե-ԺԴ.՝ Յովսէփ Օրբէլու, եւ ԺԵ-Լ.՝ Սեդրակ Բարխուդարեանի առաջաբանները: Սակայն վիմագրերը որպէս կանոն համառօտ են լինում, առաւել եւս՝ ընթերցողը, անկախ ամէն ինչից, լարում եւ կենտրոնացած ուշադրութեամբ է ուսումնասիրում լուսանկար-գծանկար-վերծանութիւն տեսքերով հրատարակուած վիմագրերը:

²² Ձեռագիր նիւթերի բնագրագիտական մշակման նրբութիւնների մասին տե՛ս յատկապէս՝ Լեւոն Խաչիկեան, Աշխատութիւններ, հտ. Ա., Երեւան, 1995, էջ 334-386, նոյնը՝ Երեւան, 2012, էջ 444-511՝ «Ժէ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարանների առաջին հատորը. քննութիւն եւ քննադատութիւն»:

Ա.2-5. Վերը այս կէտերով մեր թուարկած հնարքներում նոյնպէս նոյն ուղղանկիւն (միջակ) փակագծերն են, որոնք կրկին դժուրացնում են բնագրի ընթերցում-ընկալումը, այստեղ աւելանում են նաեւ լատինատառ «sic» բառը եւ «NB» համառօտագրութիւնը. առաջինի համար վկայակոչենք Լ. Խաչիկեանին. «Sic լատիներէն նշանակում է «այսպէս»: Իսկ ինչո՞ւ լատիներէն բառն օգտագործել եւ ո՛չ հայերէնը»²³. բայց աւելի պարզ եղանակ կայ՝ ընդամէնը ուղղագրական շեղում տառը կամ բառը գրւում է տարբեր տառատեսակով՝ ընդհանուր ուղիղի համեմատ թեք, շեղ, կամ՝ ընդհանուր թեքի համեմատ շեղ. օրինակ՝ Ա. գրքի 99րդ էջում «Ղարանլուղ զնտանումն[°]» գրելու փոխարէն արժէր գրել՝ «Ղարանլուղ զնտանումն», կամ՝ քանի որ ձեռագրերում «զնդան» եւ նրա հայերէն համարժէք «բանտ» բառերը գրւում են թէ՛ «տ» եւ թէ՛ «դ» գրերով, որեւէ յատկանշում-ընդգծում պէտք չէր. երկու ձեւով էլ հասկացւում է, որ նոյն իմաստն ունեն:

Ա.3. Կասկածելի վերծանութիւններից առաջ դրուած հարցականը. «[°]» նոյնպէս անսովոր է, ընդունածը բառից յետոյ եւ նրանից անջատ գրուած, կոր փակագծերի մէջ պարոյկ դնելն է, այսպէս՝ «(°)»:

Ա.4. Նոյնպէս անսովոր եւ անցանկալի է նաեւ յստակ ընթերցողը բայց անորոշ իմաստ ունեցող բառերից յետոյ դրուած «[sic°]»ը, սրան նման է Բ.2 կէտը, մի դրական տարբերութեամբ, որ է՝ յատուկ նշանը հայերէն է՝ [բն]. առաջին դէպքում, նորից՝ լիովին բաւարար է այդպիսի բառից յետոյ պարզ՝ կոր փակագծերի մէջ դրուած պարոյկը՝ «(°)», երկրորդի դէպքում՝ ուղղագրական խոտորումը կրկին տարբեր տառատեսակով գրելը:

Ա.5. Իսկ «[NB]» նշանը («nota bene»՝ բառացի նշանակում է «լաւ ծանօթացի՛ր, տե՛ս, նկատի՛ր» եւ գրեթէ համապատասխան է մեր «տե՛ս», «հմմտ.» շեշտումներին) բնագրերի մէջ որեւէ էջում մենք չտեսանք: Սրա հիման վրայ կարելի է ենթադրել, որ այս սկզբունքներն ու հնարանքները (առանձնապէս՝ փակագծերը եւ sic-երը) որդեգրուել եւ առաջաբանում արձանագրուել են ո՛չ հայկական՝ օտար ինչ որ «դիպլոմատիկա»կան հրատարակութիւնից, իսկ բնագրերի մէջ գործադրելիս «NB»ն մոռացուել է: Այս հիման վրայ էլ պէտք է եզրակացնենք, որ Նոր Զուղայի Դիւանի Ա. գրքում կիրառուած են ո՛չ թէ հայկական, այլ՝ ինչ որ ՕՏԱՐ ՈՒ ԽՈՐԹ «ԴԻՊԼՈՄԱՏԻԿԱՅԻ» սկզբունքներ, որոնցից անհրաժեշտ է հրաժարուել:

Ա. գրքում բնագրերի մէջ նշանակուած մէկ եւ աւելի աստղանիշերով համապատասխան էջերի տողատակերում դրուած են սուրբգրական քաղուածքների յղումները (ասենք՝ էջ 42. «Եսայի 8. 18 եւ Նամակ Եբ-

²³ Լ. Խաչիկեան, նշ. աշխ., Երևան, 2012, էջ 481:

րայեցիներին 2.13»), իսկ շարադրանքի մէջ դրուած 1, 2... թուանշաններով անհրաժեշտ պարզաբանումներ են տրուած «Ծանօթագրութիւններ» բաժնում. ասենք՝ 1ին բնագրի 1-6 ծանօթութիւնները՝ էջ 119-122: Իսկ Բ.3. սուրբգրական քաղուածքների յղումները զետեղել է «ուղղակի բնագրին վրայ քառակուսի փակագիծերով մէջ»։ այս երկրորդ սկզբունքն աւելի նախընտրելի ենք համարում, քան Ա. գրքում կիրառուածը, միայն թէ ուղիղի փոխարէն արժէ կիրառել սովորական կոր փակագծերը, որոնց ընթերցողի աչքն աւելի սովոր է, եւ որոնցից ընթերցման արագութիւնը չի նուազում:

Ա. գրքում կոնդակների սկզբում գլխատառերով գրուած է նրանց «միտք բանին», թէեւ երբեմն ո՛չ այնքան յաջող կամ ճշգրիտ²⁴, Բ. գրքում այլ լուծում կայ. օրինակ. «Թիւ 28 կոնդակ / Հեղինակ՝ Աղեքսանդր Ա. կաթողիկոս Զուղայեցի / Հասցէ. ուղղուած է Պարոն Սարգիսին / Թուական. ըստ հայկական տոմարի 1155 (1706) հաւանաբար» (էջ 8). այսինքն՝ նամակի բովանդակութիւնը չի պարզում, յայտնում է միայն՝ գրութեան հեղինակ, հասցէատէր եւ ժամանակ: Մեր կարծիքով հրատարակուող փաստաթղթի սկզբում միշտ արժէ հնարաւոր համառօտութեամբ գրել նրա «միտք բանին» կամ համառօտ բովանդակութիւնը. թէ՛ ո՛վ, ե՛րբ, որտեղի՛ց գրել է՝ ո՛ւմ, ո՛ւր եւ ինչի՛ մասին: Վաւերագրերի ժողովածոններում այդտեսակ «միտք բանին»ներն ամէն փաստաթղթի սկզբում գրելուց բացի, նրանց ամբողջութիւնը գրքի վերջում դրուած է որպէս «Յանկ փաստաթղթերի եւ նիւթերի»²⁵, որի մի միակոր է, օրինակ՝ այս. «122. Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեանի գրութիւնը Տիրայր սրբազանին՝ կաթողիկոսական ընտրութիւնների հարցի մասին»²⁶: Այս համառօտութիւն-խորագրերն ամենեւին աւելորդ չեն, առաջին հերթին նրա համար են, որպէսզի ընթերցողը սրանցով պարզի, թէ իրեն պէ՞տք է ամբողջ փաստաթուղթը կարդալ, թէ՞ պէտք է անցնի յաջորդը նայելու:

Ա. գրքում փաստաթղթերի արտաքին յատկանիշների շատ համառօտ նկարագրութիւններ արուած են ծանօթագրութիւնների մէջ. օրինակ, 2րդ

²⁴ Օրինակ, 1662 թ. յունիսի 8ին տրուած՝ Հ^օ 7 կոնդակի բնորոշումն այս է. «Յակոբ կաթողիկոսի կոնդակը Համադան քաղաքի քահանաներին, մեծաւարուստներին եւ ժողովրդին», պէտք էր անկացնել. «եւ անկայ օրինազանցութիւնները վերացնելու համար Համադանի առաջնորդ է կարգում Փերիայում նստող Դաւիթ վարդապետին»:

²⁵ Տէս, օրինակ՝ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան. գիրք ԺԶ. Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան (1866-1915), Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Երևան, 2006, էջ 502-541, ուր գրքում 1-273 համարներով տպագրուած փաստաթղթերի 2-3 տողանոց համառօտ բնորոշումներն են: Թէ՛ այս՝ «Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան» քաղմահատոր մատենաշարում եւ թէ Հայաստանի Ազգային արխիւի այլ հրատարակութիւնների մէջ ընդունուած է հրատարակուող վաւերագրերի սկզբում նրանց միտք բանի-խորագրեր դնելը, արա գրքերի վերջում նոյն խորագրերի ցանկեր գետեղելը:

²⁶ Նոյն տեղում, էջ 210 եւ 520:

կոնդակը՝ «Թղթի մեծութիւնը՝ 42x26 cm.²⁷ Գրադաշտի մեծութիւնը՝ 41x24 cm. ձախ լուսանցքի ընդերկայնական ուղղութեամբ գրուածքի հետ միասին: Գիրը՝ նոսր: Սկզբի «Յի»ն թռչնածաղկազիր: Առաջին տողը՝ «Քի [...] Հայոց» գրուած է կանաչ թանաքով» (էջ 124). ապա նկարագրուած է կնքադրոշմը եւ բերում նրա վերծանութիւնը: Իսկ Բ. գրքում բնագրերից առաջ գրուած են միայն ընդհանուր եւ գրադաշտի չափերը. «Չափ. լուսանցքէն ներս 33.5x22.5 ս.մ. լուսանցքէն դուրս 44.5x31.5 ս.մ.» (էջ 5): Մեր նախասիրած սկզբունքների համեմատ՝ երկուսն էլ անբաւարար են:

Բ. գիրքը բովանդակային ծանօթութիւններ չունի, ուստի եւ, ցաւօք, նաեւ փաստաթղթերի վրայ առկայ կնքադրոշմների վերծանութիւններ չի արել. օրինակ՝ 25րդ նամակի վերջում, կրկին ուղղանկիւն փակագծերի մէջ, անունները տալով՝ տեղեկացնում է ութ վարդապետի կնքադրոշմների առկայութեան մասին, մինչդեռ բնագրի վրայ կայ ուղիղ 21 կնքադրոշմ (էջ 201՝ լուսանկար): Այլեւ, օրինակ՝ 27րդ կոնդակի վերին լուսանցում բնագրի գրչութեամբ կայ «Շահին մեծի», սրա տակ, նոր ձեռքով՝ «№ 26» (էջ 203՝ լուսանկար). թէ՛ սրանք եւ թէ՛ փաստաթղթերի դարձերեսներին վստահաբար յաճախ առկայ զանազան նշումներ հրատարակութեան մէջ չեն արտայայտուել:

* * *

Նոր Զուղայի Դիւան մատենաշարի առաջին երկու գրքի կառուցուածքը եւ սկզբունքները պատկերելուց յետոյ, վերլիչենք կոնդակներ հրատարակելու մեր եղանակի մանրամասները. այստեսակ աշխատանքի անհրաժեշտութիւն ժամանակին առաջացաւ որպէս Մխիթարեան միաբանութեան Վենետիկի մատենադարանում պահպանուող՝ «Յարութիւն Քիւրտեան» ձեռագրական հաւաքածուի կոնդակների նկարագրութեան շարունակութիւն-արդիւնք, այսինքն՝ մի թերթանոց փաթեթ-գալարների արտաքին յատկանիշների նկարագրութիւններին աստիճանաբար աւելացաւ նաեւ նրանց պարունակած բնագրերի վերարտադրութիւնը» (որովհետեւ երբեմն նկարագրութիւնների եւ բնագրերի ծաւալները հաւասար են լինում): «...աստիճանաբար ստեղծեցինք մեր համոզմամբ նիւթին յարմարող հարցակարգ. առանձին տողով կարգային Համարը... յաջորդ պարբերութեան մէջ Գրչութեան վայր եւ Գրութեան թուական, երրորդ պարբերութիւնը՝ Հեղինակ, Հասցէատէր եւ Միտք բանի: Չորրորդ պարբերութիւնը ձեռագրերի նկարագրութիւններին յատուկ հարցաշար է. Թերթ, Նիւթ, Մեծութիւն, Գրութիւն, Գիր, Տող: Ի վերջոյ՝ առանձին

²⁷ Անհասկանալի է, թէ ինչո՞ւ է այս՝ cm. բառը լատինատառ:

պարբերութիւններով ունենք Յարգարանք, Կնքադրոշմ-նշում եւ Վիճակ հարցերը: Այս բոլորը միասին, վստահ ենք, պատկերացում են տալիս կոնդակի բովանդակութեան եւ արտաքին յատկանիշների մասին: Գալով բնագրերի վերարտադրութեանը՝ գիւտի կարիք չկար. արեցինք այնպէս, ինչպէս ձեռագիր գրքերից արտածում-մշակում ենք միջնադարեան բնագրերը. միայն կոնդակների իւրայատուկ ձեւի (1 թերթանոց փաթեթ-գալար, լուսանցներում երբեմն գրուած-տեղաւորած բնագրի աւարտը) թելադրանքով... գործածեցինք տողափոխի՝ / գծիկ-նշանը²⁸: Միւսը՝ հարկ համարեցինք ինչ-որ ձեւով զատորոշուած ներկայացնել կարմրով գրուած սկզբնատառերը, բառախմբերը եւ հատուածները, ուստի այդպիսիք... բերում ենք նոտրգիր տառատեսակով: Սրանից էլ բխեց յաջորդը. կոնդակների մէջ կան նրանց ասելիքի համար կարեւոր՝ կարմրագիր գլխատառերով սկսուող բառեր, որոնք շարադրանքի տրամաբանութեամբ եւ ըստ ներկայիս կէտադրական կանոնների՝ պէտք էր գրել սովորական փոքրատառով. ստիպուած էինք սրանց գլխատառը պահպանել, բայց սրանցից առաջ ոչ թէ վերջակէտ, այլ՝ ստորակէտ դնել»²⁹:

Ասուածն առաւել առարկայօրէն պատկերելու նպատակով բերենք նոյն Քիւրտեան հաւաքածուի առաջին կոնդակի նկարագրութիւնը, մնացածի համար ընթերցողին առաջարկելով ըստ հարկի նայել մեր հրապարակման ամբողջութիւնը.

«1

ԵՐՈՒՍԱՂԷՄՌՃԽԹ. - 1700

ՀԵՂԻՆԱԿ՝ Մինաս Ամդեցի պատրիարք հայոց Երուսաղէմի (1697-1704): ՀԱՍՅԷԱՏԷՐ՝ Կ. Պոլսի քէրէստէճիներ: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ շնորհակալութիւն վասն նուէր ստացուած «քէրէստէ՝ տախտակս բազումս՝ մեծ եւ փոքր, եւ այլ անօթ պիտանացու վանացս՝ զորս գրով եւ զորս առանց գրի»:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ բ. երեսը: ՆԻԻԹ՝ թուղթ. եւրոպական, երեք կիսալուսնի (եռամահիկ) լուսադրոշմով եւ լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 59,8x22,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (45,5x17,2). եզրերից կարմրով սահմանագծուած, ձախ եզրին եւս մի կարմիր գիծ, որի եւ գրադաշտի սահմանագծի միջեւ 4 սմ լայնքի չգրուած տարածութիւն: ԳԻՐ՝ նոտրգիր: ՏՈՂ՝ 65:

²⁸ Տողերի կարգային համարներ դնելը՝ ընթերցումը դժուարացնող, ծանրացնող եւ անլորդ դիտեցինք:

²⁹ Տե՛ս Գէորգ Տէր-Վարդանեան, «Յարութիւն Քիւրտեան» հաւաքածուի կոնդակները (Նկարագրութիւններ եւ բնագրեր), «Էջմիածին» ամսագիր, 2012/Ե., էջ 70-71 (ամբողջը՝ էջ 70-117):

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ առաջին՝ «Ի» տառը 23,5 սմ երկարութեամբ թռչնագիր, բուսական յաւելումներով:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ թերթի վերին եզրին կպած, կենտրոնում, երկաթագիր, կապերով՝ «Երուսաղէմ»: Նոյն եզրից 7՝ սմ ցած կենտրոնում, 3,7 սմ տրամագծով կլոր, կարմրով կնքադրոշմ, շուրջանակի գրուած՝ «ԿՆԻՔՍ ՍՈՒՐԲ ԳԼԽԱԴՐԻՆ Է ԱԹՈՌԻ Ա՝Մ ՀԱՅՈՅ», կենտրոնի 2,6 սմ տրամագծով շրջանակի մէջ Աստուածածին, երկու հրեշտակ, որոնք Յովհաննէս Մկրտչի գլուխը պահել են սկուտեղ-թասից վեր: Բ. երեսի ստորին ծայրին. «Ըստամպօլու քէրէստէճոց օրհնութեան գիրն է»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար³⁰:

Սա յիշեալ հրապարակման մէջ առկայ 21 նկարագրութիւնների շարքում ծաւալուններից մէկն է, բայց ընդհանուր առմամբ շատ մեծ տեղ չի զբաղեցնում, փոխարէնը՝ կոնդակի մասին՝ որպէս առարկայ, իր, ամբողջական պատկերացում է տալիս, որեւէ մանրամասն զանց չի առնում եւ բնագրի վերծանութեան հետ միասին գիտական շրջանառութեան մէջ է դնում կոնդակի ունեցած ամբողջ տեղեկոյթը³¹:

* * *

«Օտար եւ դժուարընկալերի (Բ.՝ դժուար հասկնալի) բառեր» ցանկերը (Ա. էջ 155-8, Բ. էջ 169-809). արձանագրենք, որ սրանք բաւական օգտակար են, նաեւ համաձայնենք աւելի ճոխ ցանկ ունեցող՝ Բ. գրքի աշխատասիրողի հետ («պէտք է խոստովանիլ, որ տասնեակ մը բառեր մնացին անստոյգ». Բ. էջ 10 չհ.) եւ աւելացնենք, որ այս ցանկերը գիտական բնոյթ չունեն, հիմնականում մակերեսային են՝ կազմուած են առանց հարկաւոր բառարաններ օգտագործելու, զուտ բանաւոր իմացութիւնների հիման վրայ, շատ դէպքերում թերի եւ անստոյգ բացատրութիւններով, միաժամանակ նշուած չէ, թէ ո՛ր բառը ո՛ր փաստաթղթի մէջ է գործածուած եւ ի՛նչ կապակցութեան մէջ, իսկ սա նշանակում է, որ ընթերցողը կարգացած բառերի բացատրութիւնները յաճախ պէտք է փնտրի այլ՝ մասնագիտական բառարաններում: Նաեւ՝ Բ. գրքում պարզուած չէ օտար՝ փոխառեալ բառերի մայր (փոխատու) լեզուն. փաստաթղթերը

³⁰ Նոյն տեղում, էջ 73:

³¹ Նոյն սկզբունքների կիրառումով արել ենք մի այլ հրապարակում եւս. տնւ Գեորգ Տէր-Վարդանեան, Ջուլիետա Սահակեան, Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսի 976 թուականի կոնդակը՝ տրուած Դարաշամբի Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքին, «Էջմիածին» ամսագիր, 2012/Է, էջ 92-103 (էջ 93, ծ. 2՝ Զ. Սահակեան արել է միայն քննարկի նախնական վերծանությունը), բայց այստեղ ամէլի բարդ հարցեր են լուծուել. կոնդակի վերագտնուած հիմք-փաստաթուղթը տպագրել ենք նրանից հնում արուած հինգ հրատարակությունների հետ համեմատելով:

գրուել են հիմնականում էջմիածնում եւ ուղարկուել Նոր Զուղա՝ պարսկաբնակ միջավայր, բայց միշտ չէ որ օտարաբանութիւնները պարսկերէն են, կան նաեւ արաբերէն-թուրքերէններ:

Սխալ կամ թերի բացատրութիւնների օրինակներ են՝

Ա.155. «անմուղիաթ (արաբ.-պարսկ.-հայ.), անկաշկանդ, առանց իրեն պարտաւորուած զգալու». հայերէն բառարաններից որեւէ մէկում այսպիսի բառ չգտանք, բայց իմաստը պէտք է որ լինի՝ անզգոյշ (մուղաթ՝ զգոյշ-ի ժխտականը)։

Բ.169. «աղթարմայ, ախտարմայ - աղանդ, բախտ գուշակող». սխալ է, բառը նշանակում է «կաթոլիկ»։

«աղորթ - ուղղակի, ճիշդ», թերի եւ սխալ է, հայերէն գրական «ուղղորդ», որոշ բարբառների «օղորթ, ղորթ»՝ ուղիղ, իրաւացի, ճշմարիտ բառն է։

«ամարաթ - տուն, շէնք». «պալատ» բառն է։

«արզ - խնդրանք, փափաք». նաեւ՝ «յայտարարել, տեղեկացնել»։

Բ.171. «զասիտ - ստացագիր». գ-ն նախդիրն է, պէտք էր դնել «ասիտ» ձեւով։

«ըհտիպար - վստահիլ». յայտնի «էհտիբար»ն է, ուղղակի՝ «վստահութիւն»։

«ըռազի - գոհ». բայց սա «համաձայն, համամիտ, ընդունելի» բառն է։

Բ.172. «թասլիմ - յանձնուիլ». «պատուիրել»ն է։

«թաւլէ - ագարակ». գոմ, ախոռ բառն է։

Բ.176. «շար, շառ - դժուարութիւն». աւելի տարածուած իմաստը «փորձանք»ն է։

Տարօրինակ է, որ երբեմն բացատրուած են նաեւ հայերէն լիովին հասկանալի բառերը։

Բ.172. «թարց կամ թարձ - բացի, հակառակ, առանց»։

Բ.173. «կոներ - կախ թեւեր». մինչդեռ՝ «կուռն - կողմ, թեւ» բառն է։

«խղիւայթեալ - աղիքներու ճմլուիլը». բառի բազմիմաստութիւնը տե՛ս ՆՀԲ, Ա. էջ 947։

«մախալ - նախանձ». պէտք է լինէր՝ «նախանձել»

Բ.176. «յամլորդի - ամուլ մօրմէ ծնած». պէտք է գրուէր՝ «ամլորդի»

Բ.177. «պայազատ - ազնուական»՝ այս բառն այստեղ պէ՞տք էր գրել. եւ այլն, եւ այլն։

Բառացանկերին վերաբերող մեր խօսքն աւարտենք հետեւեալով. ընդհանրապէս այսպիսի սկզբնաղբիւրներին կից բառացանկերը կազմելիս արժէ առաջնորդուել նախ երկլեզուեան՝ թուրքերէնից, պարսկերէնից եւ արաբերէնից հայերէն բառարաններով, ապա՝ ուշմիջնադարեան աղ-

բիւրներէ եւ բարբառային բառարաններով, առանձնապէս՝ բանաստեղծական-գուսանական (Յովհաննէս Թլկուրանցու, Յովասափ Սեբաստացու եւ այլոց) ժողովածոներէ, ժողովրդական հեքիաթներէ գիտական հրատարակութեան հատորաշարի¹ մէջ առկայ բառացանկերով, միջին հայերէնի այժմ առկայ բացատրական² եւ մօտ ապագայում տպագրուելիք ստուգաբանական³ բառարաններ»ով, Նորայր Բիւզանդացու թերի պահպանուած գործով⁴. Իսկ նման բառացանկի լաւագոյն նմուշ համարում ենք երջանկայիշատակ Բաբէէն Չուգասզեանի կազմածը⁵:

* * *

Ա. գրքում սխալ ընկալումներ եւ նոյնպիսի վերարտադրութիւններ չատ կան. օրինակ՝

Էջ 64 Հ^ա 10 վաւերագրի վերջը վերծանուած է. «Գ (3)ում կնիք մատ/ան[ե]աւս իմ եղի», մինչդեռ [172]րդ էջում տպուած լուսանկարով սխալ ընթերցումը ճշգրտուում է. «Գ.ում (3) կնիք մատ/անուս իմ եղի», այսինքն՝ «երեքում իմ մատանու կնիքը դրեցի»:

Էջ 89 «փետրվարի ԺԲ(12)<ս>ին» - պէտք էր գրել այսպէս. «փետրվարի ԺԲ.սին (12)». որովհետեւ «ԺԲ.սին» աշխարհաբար «տասներկուսին» բառն է, ուստի եւ «ս» տառն այստեղ աւելորդ է:

Էջ 89 «քաջ հովիւ եւ վրէժ խնդիր[sic] օրինացն Աստուծոյ». թէեւ բնագրում (տե՛ս էջ 180՝ 20րդ վաւերագրի լուսանկարը) բառի բաղադրիչներն իրարից անջատ են գրուած, բայց պէտք էր գրել «վրէժխնդիր» եւ

¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, հտ. Ա-ԺԷ., Հայաստանի ԳԱ հրատ., Երեւան, 1959-2012. րոյորը տե՛ս Հայաստանի ԳԱԱ Հիմնական գրադարանի հետեւեալ էջում՝ <http://serials.flib.sci.am/openreader/test/index.html>:

² Ռ. Ս. Ղազարեան, Հ. Մ. Աւետիսեան, Միջին հայերէնի բառարան, հտ. Ա (Ա-Կ), հտ. Բ. (Հ-Ֆ), ԵՊՀ հրատ., Երեւան, 1987, 1992, 420, 468 էջ. միահատոր տարբերակը՝ ԵՊՀ հրատ., Երեւան, 2009, 635 էջ: Տիտղոսաբերթի համաձայն սա «2-րդ բարեփոխումը հրատարակութիւն» է, մինչդեռ Ա. հատորի մեր ընդարձակ գրախօսութեան մէջ (ՊԲՀ, 1988/Գ., էջ 206-213) արուած բազմաթիւ դիտողութիւնների շարքում նշուած է, օրինակ, որ ձեռագրի սխալ ընթերցման հետեւանք են իրականում գոյութիւն չունեցած հետեւեալ բառերը՝ «զգուանացնել», «կարաւ», «կոզպատել». մինչդեռ այս «բարեփոխում»-ի մէջ սրանք նորից կան:

³ Wörterbuch des Mittelarmerischen: Historisch-Etymologisch. auf Grund der alten Sprache und unter Berücksichtigung, der Neuarmenischen Dialekte, Bearbeitet von J. Karst (քնագիրը Մաշտոցեան Մատենադարանի դիւանում է, շուտով հրատարակուելու է):

⁴ Նորայր Ն. Բիւզանդացի, Բաղգիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ. դարուց, հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, Ժնև, 2000, 767 էջ:

⁵ Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ (ԺԳ. դար), Աշխատասիրութեամբ Բ. Լ. Չուգասզեանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1980, էջ 175-249:

առանց խանգարող [sic]–ի, որովհետեւ «վրէժխնդիր» նշանակում է նաեւ «նախանձախնդիր» (տե՛ս ՆՀԲ, Բ., էջ 834գ), ուստի եւ այս շարադրանքի մէջ լիովին տեղին բառ է: Մի այլ հանգամանք՝ միջնադարեան ձեռագրերում (նաեւ՝ փաստաթղթերում) բառանջատում կամ չի լինում, կամ անկանոն է լինում՝ անջատ գրելիք տեղում կպած են գրում, կիպ՝ միասին գրելու տեղում՝ անջատ. մենք եթէ գրուածի տեսքերին ստրկօրէն հետեւելու լինենք, մեր արածը կլինի ոչ թէ վերծանութիւն, այլ՝ արտանկարում, իսկ այդպէս անելուց աւելի նախընտրելին որեւէ գրութեան լուսանկարը տպելն է, եւ այս դէպքում էլ՝ արդէն ամէն ընթերցող ինքը պէտք է անի վերծանութեան աշխատանքը, նաեւ՝ իր իմացութիւնների համեմատ՝ իւրովի հասկանայ:

Եթէ կարճ ասելու լինենք, բնագիր վերծանել–հրապարակելը նշանակում է հիմնականում՝ ա) ճիշտ ընթերցում, բառանջատում եւ ընդունում սկզբունքներով վերարտադրում, բ) ներկայիս սկզբունքներով ճիշտ կէտադրում եւ մեծատառի նշանակում⁶: Ուստի, վերը ներկայացուած առաջարկներն առարկայօրէն պատկերելու եւ հնարաւոր չափով կատարեալաւորեալ պատկերացում տալու նպատակով, միաժամանակ՝ համառօտաբան լինելու եւ ամէն ստորակէտի խնդիր երկարօրէն բացատրելուց խուսափելու համար, ամէն գրքի երկուական բնագիր (Ա.1, Ա.20, Բ.25, Բ.27) բերում ենք զուգադիր երկուական սիւնակներում. առաջինում՝ ինչպէս տպուած են, երկրորդում՝ ինչպէս մենք ենք նախընտրելի համարում: Ընթերցողը պէտք է համեմատելով կարդայ, տեսնի եւ գնահատի երկու տարբերակների զանազանութիւնները⁷.

⁶ Մեր ձեռագիր աղբիւրների կէտադրութեան մասին դիպուկ գնահատական ունի Լ. Խաչիկեանը. «Կէտադրութիւնը կատարել ենք ինքներս, որովհետեւ միջնադարեան ձեռագրերում կէտադրութեան մշակուած կանոններ չեն եղել, եւ ամէն ոք վարուել է ըստ իր կամեցողութեան, յաճախ բոլորովին չմտնելով իր կողմից գործածուող կէտերի նշանակութիւնը: Որպէս բացառութիւն, նոյնութեամբ պահել ենք Յովանէս Խիզանցի գրքի 1407 թուականին շարադրած յիշատակարանի կէտադրութիւնը, որովհետեւ գրիչը յատուկ ուշադրութիւն է դարձրել այդ բանի վրայ եւ մշակել է սեփական կանոններ (այդ մասին նա մանրամասն հաշիւ է տալիս իր յիշատակարանում, տե՛ս էջ 66-69)», ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Մասն առաջին (1401-1450 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1955, էջ ԿԴ. (LXIV): Տե՛ս նաեւ Յակոբ Մ. Մխիթարեան, Հայերէնի կէտադրութեան համառօտ պատմութիւն, «Լոյս» հրատ., Երեւան, 1972, 147 էջ:

⁷ Մեր խնդրոյ առարկայ գրքերի առիթով մտածում ենք, որ կոնդակների լուսանկարները տպագրելու դէպքում տողաւիտիսի նշան դնելը գուցէ անելորդ համարուի, որով եւ բնագիրն անելի ընթերցուող կլինի:

1. ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ
ՍՊԱՀԱՆՈՒՄ, ՋՈՒՂԱՅՈՒՄ,
ԵՐԵՒԱՆՈՒՄ, ՓԵՐԻԱՅՈՒՄ,
ԲՈՒՐՎԱՐԻՈՒՄ, ԳԱՆՏԻՄԱՆՈՒՄ
ԵՒ ԼԻՆՃԱՆՈՒՄ ԲՆԱԿՈՒՈՂ
ՄԱԾԱՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՆ,
ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԻՆ⁸

Է.

[Կնիք ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ]
Յ[իստու]ի Ք[րիստոս]ի ծառայ Փիլիպ-
պոս Կ[աթողիկոս] Ամ[ենայն] Հայոց եւ
պատրիարք Վաղարշապատու, վեհա-
փառ եւ հրեշտակապար, աղինասարաս
եւ երկնահանգէտ Սրբոյ Աթոռոյ Էջմիած-
նի, յորմէ ժամանեալ հասցէ գիր ա[ւր]
հնութե[ան] եւ նամակ պահպանութեան,
